

Նոնա Արևաձե-Կոտորաշվիլի

Օրագիր «Ուսուցանիք վրացերենը, որպես երկրորդ լեզու», խորհրդատու-ուսուցիչ

ՑՈՒՑԱՊԱՍՏԱՌՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՑԵՐԵՆԻ, ՈՐՊԵՍ ԵՐԿՐՈՐԴ ԼԵԶՎԻ, ՌԻՍՈՒՑՄԱՆ ՄԵԶ

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Պետական լեզվի իմացությունը Վրաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների համար ինտեգրման և ինքնաիրացման կարևորագույն ռեսուրս է, այդ պատճառով ոչ վրացալեզու դպրոցներում պետական լեզվի ուսուցումը խորացված է ընթանում: Տարբեր նորարարական մեթոդների հետ մեկտեղ, կիրառում ենք ուսուցում **պաստերներով՝ ցուցապաստառներով**, բնական մոտեցման մեթոդի կիրառությամբ: **Բնական մոտեցման** առավելությունը նրանով է պայմանավորված, որ հաղորդակցական ակտիվություններն ավելի են մոտեցած կենցաղային միջավայրին և լեզու սովորողի համար հեշտացնում են ուսանման լեզվի յուրացումը: Ցուցապաստառները, որոնց վրա տրված են այս կամ այն թեմայի մասին պատկերված կոնկրետ իրավիճակներ, ուսուցչին հնարավորություն են տալիս որոշել, թե ինչ բառապաշարային միավորներ և քերականական կառույցներ գիտի աշակերտը և, նաև սահմանել, թե ինչ լրացուցիչ գիտելիքի յուրացման համար են պատրաստ նրանք: Բնական մոտեցման ժամանակ կիրառվում է միայն նպատակային լեզուն, իսկ աշակերտի մայրենի լեզվի կիրառությունը նվազագույնի է հասցված: Ցուցապաստառի կիրառությամբ այնպես պետք է պլանավորվի դասը, որ նվաճվելիք նպատակները և արդյունքները համապատասխանեն Ազգային ուսումնական պլանին: Եթե ցուցապաստառի պյուժեն մշակվի մաս-մաս, այսպես կոչված «պատուհանների» միջոցով, աշակերտների ուշադրությունը կենտրոնացված կլինի կոնկրետ առարկաների և իրադարձությունների վրա, նրանց հնարավորություն կտրվի արտահայտել ենթադրություններ և ավելի հետաքրքրությամբ բացել մյուս «պատուհանները»: Ի վերջո, ամբողջությամբ բացված ցուցապաստառի մասին աշակերտները կարողանում են կապակցված խոսել վրացերեն, ինչը բարձրացնում է նրանց՝ պետական լեզուն սովորելու մոտիվացիան:

Այսօր արդեն բոլորի համար պարզ է, որ միայն մեկ լեզվի իմացությունը, թեկուզ լիարժեք մակարդակով, չի տալիս լիարժեք կրթություն ստանալու հնարավորություն: Այդ պատճառով ողջ աշխարհում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում երկրորդ լեզվի ուսանմանը, և

այս ուղղությամբ մշակվել են բազմաթիվ արդյունավետ մեթոդներ: Վրաստանի կրթական համակարգը ևս այս տեսակետից փորձում է իմաստավորել Եվրոպայի և Ամերիկայի լավագույն փորձերը և դպրոցներում ներդրվում են այն ավանդական թե նորարարական

մեթոդները, որոնք արդեն փորձարկված են և հաջողությամբ աշխատում են բազմաթիվ երկրներում:

Պետական լեզվի իմացությունը այսօր ինտեգրման և ինքնաիրացման միակ միջոցն է Վրաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների համար: Վաղուց արդեն հայալեզու և ադրբեջանալեզու դպրոցներում վրաց լեզվի ուսուցումը խորացված է ընթանում: Թեպետ կարևոր է վերլուծել, թե ուսուցման որ մեթոդներն ու մոտեցումներն են արդյունավետ, որպեսզի արդյունքն ավելի ակներև և շարունակական լինի:

Երկրորդ լեզվի ուսուցման մեջ ավելի և ավելի են ընդունում բնական մոտեցման առավելությունը, ինչը նրանով է պայմանավորված, որ հաղորդակցական ակտիվություններն ավելի են մոտեցած կենցաղային միջավայրին և հեշտացնում են լեզու սովորողի համար լեզվի յուրացումը: Բնական մոտեցման կիրառման ժամանակ աշակերտներն աստիճանաբար անցնում են խոսքի նախակիրառական փուլից, վաղ, անցումային և լիարժեք կիրառության փուլերի: Վաղ կիրառության փուլում աշակերտները միայն առանց բառերի են արտահայտում ասելիքը, անցումային փուլում՝ մեկ կամ երկու բառով, իսկ լիարժեք կիրառության փուլում

արտահայտություններով և նախադասություններով:

Բնական մոտեցումը հինգ հիմնական դրույթների վրա է հիմնվում, այն կազմել են ամերիկացի գիտնականներ Տրեյսի Տերելը և Ստիվեն Կրաշենը: Այն հիմնվում է լեզվի հաղորդակցական գործառույթի վրա և հիմնականում այն լեզվական միավորներն է կիրառում, որոնք աշակերտը կարող է հասկանալ:

Այս տեսական դրույթները ենթադրում են հետևյալը.

- Լեզվի յուրացումը տարբերվում է լեզու սովորելուց: Առաջինը ենթագիտակցական մակարդակում ընթացող գործընթաց է, իսկ երկրորդը՝ լեզվի սահմանումները գիտակցված իմաստավորելու գործընթաց: Երկրորդ լեզվի լիարժեք կիրառումը հնարավոր է միայն յուրացման ճանապարհով: Երկրորդ լեզվով հաղորդակցվելու, բանավոր խոսքը հասկանալու և խոսելու կարողությունները յուրացման գործընթացում են առաջանում և ձևավորվում:

- Գիտակցված սովորելը միայն դիտարկողի և արտաբերած տեքստերն ուղղող օպերատորի դեր է կատարում: Այս գործընթացում աշակերտը հատուկ մտածում է այն մասին, թե ինչ և ինչպես արտաբերի:

- Քերականական կառույցների յուրացումը որոշակի, նախօրոք մտածված

հաջորդականությամբ է իրականացվում և դրանք՝ այլ հաջորդականությամբ սովորելը պակաս օգուտ է բերում:

• Լեզուն ամենից լավ այն տեղեկագրերից ենք սովորում, որոնք մի փոքր հեռանում են գոյություն ունեցած իրազեկությունների շրջանակներից: Այն կոչում են «ընկալելի ներդրում +1»:

Ելնելով վերոասացյալից՝ ուշագրավ է, որ բնական մոտեցմամբ ուսուցման լավագույն միջոցներից մեկը թեմատիկ պոստերներն են, կամ մեծ պաստառները, որոնց վրա տրված է այս կամ այն թեմայի վերաբերյալ պատկերված կոնկրետ իրավիճակ: Դրանց վրա աշխատանքն ուսուցչին հնարավորություն է տալիս սկզբից սահմանել, թե ինչ բառապաշարային միավորների և քերականական կառույցների են տիրապետում աշակերտները, և մինչև ժամանակ սահմանել, թե ինչ լրացուցիչ գիտելիքի յուրացման համար են նրանք պատրաստ: Բնական մոտեցման գլխավոր գործիքն է այսպես կոչված «ընկալելի ներդրում +1»-ը: Սա ցանկացած տեղեկագիր է, որը սովորողը կստանա ուսումնական գործընթացում, և որը նրա համար հասկանալի է: Օրինակ, ուսուցիչն ասում է. «Սուրեն՝ն, նկարագրի՛ր, ինչ է տեղի ունենում պաստառի այս մասում»: Այս ցուցումը Սուրենը կարող է չհասկանալ, քանի որ նա չի հասկանում

„ՏԵՂԵԳ“ նկարագրի՛ր, բառը: Ըստ բնական մոտեցման, ուսուցիչը երկու կոնկրետ գործողությամբ պետք է այս անհասկանալի տեղեկագիրը վերածի ընկալելի ներմուծման.

1. Փոխի անհասկանալի բառը հասկանալի բառով (օրինակ՝ „ժօտեճօճօ“, „տէջօ“...):

2. Մարմնի շարժումով, իրեր ցույց տալով ակնարկի աշակերտին, թե ինչ են պահանջում անել:

Կարևոր է, որ բնական մոտեցմամբ կիրառվում է միայն նպատակային լեզուն, և երեխայի մայրենի լեզվի կիրառությունը նվազագույնի է հասցված: Իսկ թեմատիկ պաստառը դրա լավ հնարավորություն է տալիս, քանի որ աշակերտը տեսնում է իրեն ծանոթ առարկաներ և իրավիճակ, ինչն անհրաժեշտ չէ թարգմանել: Բնական մոտեցման տարածված մեթոդ է «Լրիվ ֆիզիկական արձագանքը», որը ենթադրում է աշակերտների արձագանք տարբեր ժեստերով, ինչպիսիք են մատով ցույց տալը, գլուխը թափահարելը, դիմախաղով և այլն, ինչն, ինքնըստինքյան, ծառայում է նրան, որ ուսուցիչը լեզվի դասի համար հատկացված ժամանակն առավելագույնս օգտագործի յուրացվելիք լեզվով հարաբերության հաստատման համար:

Մինչև իմ փորձի փոխանցումը, պետք է նշեմ, որ բնական մոտեցման ժամանակ, նախակիրառության փուլում

չի երաշխավորվում, որպես ուսումնական ակտիվություն, ներմուծել կարողալը և գրելը: Թեպետ, եթե նախատեսենք այն միջավայրը, որտեղ աշխատում են վրացերենի, որպես երկրորդ լեզվի ուսուցիչները, կարելի է այս երաշխավորությունը փոխել ըստ այն անհրաժեշտության, ինչ պայմանի առջև կհայտնվի ուսուցիչը: Եթե մենք կոնկրետ խմբի հետ (օրինակ՝ առաջին դասարանում) առաջին անգամ ենք սկսում լեզվի ուսուցումը, պարզ է, որ այն երաշխավորությունները կընդունենք, ինչը բնական մոտեցման մեթոդով և ընդհանրապես պաստառներով աշխատելու ժամանակ է երաշխավորված, թեպետ հաճախակի են դեպքերը, երբ ուսուցիչը մտնում է խումբ, օրինակ՝ 5-րդ դասարան, և նա ստիպված է լինում ուսուցանել երեք տարբեր փուլերում գտնվող աշակերտների, համապատասխանաբար, նրա համար, ով գիտի գրել-կարդալ և խոսքի դրսևորման փուլում է, պետք է ներմուծի համապատասխան մակարդակի ուսուցում, որպեսզի ավելանա աշակերտի գիտելիքի մակարդակը և ապահովվի նրա լեզվի տիրապետման մակարդակի հետագա աճն ու զարգացումը: Այստեղից ելնելով, ուսուցիչը հնարավոր է կատարի մեթոդի մոդիֆիկացում և հրաժարվի պաստառների օգտագործումից:

Այժմ ուզում եմ պատմել իմ փորձի մասին: Պետք է ասել, որ պաստառներով աշխատելու հնարավորություն բոլոր դպրոցները չունեն, և դա նույնիսկ ճոխություն կարող ենք համարել: Թեպետ, տվյալ տարածաշրջանների դպրոցներում, որտեղ Ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոնը իրականացնում է «Ուսուցանի՛ր վրացերենը, որպես երկրորդ լեզու», նախագիծը, ուսուցիչներին որպես ուսումնական ռեսուրս փոխանցվել են տարբեր թեմաներով ստեղծված պաստառներ: Դա ինձ հնարավորություն տվեց տարբեր աստիճաններում գտնվող աշակերտների համար, հիմնվելով պաստառների վրա և բնական մոտեցման մեթոդով, պլանավորել և իրականացնել ուսուցումը:

Առաջին անգամ պաստառների կիրառության միջոցով լեզվի ուսուցման մեթոդների մասին տեղեկություններ լսել եմ ամերիկյան կրթության մասնագետ Ալան Կրոուֆորդի վարժանքների ժամանակ, իսկ այն բանից հետո, երբ այդ ռեսուրսն իմ ձեռքի տակ եղավ, որոշեցի այդ մեթոդները կիրառել իմ մանկավարժական փորձում:

Նախ՝ ընտրեցի մեթոդներ, նպատակներ և նվաճվելիք արդյունքներ, որոնք ցանկալի է, որ համապատասխանեն վրացերենի, որպես երկրորդ լեզվի, չափորոշում տրված համապատասխան

դասարանի նպատակներին և նվաճվելիք արդյունքներին: Օրինակ.

• Վր.երկ.V.21. Աշակերտը կարող է մասնակցել պարզ ինտերակցիայի:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

• Հիմնվելով նկարների վրա՝ կազմում է և պատմում պարզ պատմություն:

• Խոսում է իրեն ծանոթ թեմաներով (օրինակ՝ Ընտանիքում, Ընկերների / բարեկամների մասին, Ազատ ժամանակ և այլն):

Բացի այդ, նախօրոք նախատեսեցի այն, թե որքանով էր համապատասխանում պաստառի թեման դասագրքի թեմաներին:

Ըստ իս, կարևոր է, որ պաստառից դասագրքին վերադառնալը աշակերտի համար շփոթեցուցիչ չլինի:

Իսկ մեթոդը կայանում է հետևյալում՝ պաստառը ծածկվում է սպիտակ թղթով այնպես, որ նրա վրա հնարավոր լինի այսպես կոչված «պատուհաններ» կտրել:

«Պատուհանը» պետք է բացվի և ծածկվի ըստ նրա, թե որ հատվածն էք ուզում ցույց տալ տվյալ դեպքում: Փուլերով տեղի է

ունենում պաստառի առանձին դրվագների մշակում: Պաստառի միայն մի մասն է

բացված, որպեսզի աշակերտների ուշադրությունը կենտրոնացված լինի

կոնկրետ առարկաների վրա և առարկաների անունների թվարկման ժամանակ խուսափենք բառապաշարային այլ միավորների անվանումից:

Միննույն ժամանակ, աշակերտների մոտ հետաքրքրություն պետք է հարուցի պաստառի ծածկված մասը, և նրանք

հնարավոր է ենթադրեն, թե ինչ կբացվի այլ «օղանցք» բացելիս՝ իմանան, թե արդյոք արդարացավ իրենց ենթադրությունը:

Պետք է նախատեսել նաև, որ եթե ամբողջությամբ «բացված» պաստառը երկար ժամանակ թողնենք աշակերտների տեսադաշտում, միննույն նկարին դիտելը,

հնարավոր է, թուլացնի նրանց հետաքրքրությունը սովորելու նյութի հանդեպ, ինչը ուսուցման ընթացքում

խանգարիչ գործոններից մեկն է: Նրանից հետո, երբ «կբացվի» պաստառը և արդեն

մշակված կլինեն առանձին դրվագներ, աշակերտների օգնությամբ կազմում եմ

տեքստն այնպես, որ պաստառը հաղորդի մեկ ամբողջական պատմություն:



Տեքստը պետք է մասնատված լինի պարբերությունների, այնպես, որ հնարավոր լինի այն պատմել ոչ հաջորդաբար: Դա աշակերտին հնարավորություն է տալիս առանց անգիր անելու, ցանկացած հաջորդականությամբ խոսել պաստառի վրա պատկերված թեմայի շուրջ: Երբ պաստառը համարյա ամբողջացված է, և տեքստն էլ կազմված, աշակերտներին ինքնուրույն աշխատանք է տրվում՝ նրանք խմբերով, մեկ դրվագի շուրջ իրենք են կազմում տեքստ, որը հենց նույն տեղում մշակվում է և տեքստին ավելացվում արդեն ուղղված տեսքով: Այս ակտիվությունը որոշակի սկաֆոլդինգ է՝ աշակերտներին այնպիսի առաջադրանք է տրվում, որը մի փոքր հեռանում է նրանց հնարավորությունների

Ցանկացած ակտիվություն և մեթոդ հաշվարկված է որոշակի արդյունքի հասնելու համար, համապատասխանաբար, պաստառն այսպիսի մեթոդներով մշակելուց հետո աշակերտները կարողանում են ընդարձակ տեքստեր փոխանցել և նրանց մոտ առաջանում է զգացողություն, որ իրենք կարող են վրացրեն կապակցված և ազատ խոսել՝ նրանք ուղղակի ոչ թե անգիր են անում տեքստը, այլ գիտակցում են ողջ բովանդակությունը, կարող են դրվագները փոխանցել նաև ոչ հաջորդաբար և պատասխանել հարցերի՝

շրջանակներից և իրականացվում է սկզբունքը՝ «ընկալելի ներմուծում +1»:

Որպեսզի աշակերտները հեշտ պատմեն, պաստառի վրա ավելացնում են քարտեր, որոնց վրա գրված են քերականական կառույցներ և նոր բառապաշարային միավորներ, որպեսզի լեզու սովորողի հուզական վիճակը չարգելակի և ֆիլտրի լեզվի յուրացման գործընթացը: Տվյալ քարտերը հենց այս ֆիլտրերը հանելու լավ հնարավորություն է:

Երբ աշակերտները մինչև վերջ յուրացնեն և գիտակցեն տեքստը, կարելի է այն վերլուծել գրաֆիկական կազմակերպիչների՝ գծապատկերների, դիագրամների միջոցով:

Ելնելով անձնական փորձից: Գրաֆիկական կազմակերպիչների օգնությամբ կարող են տեքստը վերլուծել, յուրացված բառապաշարը և քերականական կառույցները կիրառել այլ բովանդակության փոխանցման համար:

Վերջում, անպայման պետք է նշել, նաև այն բացասական կողմերը, որ ուղեկցում են պաստառների վրա աշխատելու գործընթացին.

1. Միշտ չի համապատասխանում դասագրքի թեմային:
2. Պաստառով աշխատանքը պահանջում է սիստեմատիկություն և այդ

շրջանում համարյա չի հաջողվում
օգտագործել դասագիրքը:

3. Միջավայրը և ռեսուրսների
սակավորությունը:

4. Հնարավոր է, մեկ պաստառը, եթե
այն որոշակի ժամանակամիջոցում

չմշակվի, ճանձրալի դառնա երեխաների
համար:

Չնայած դրան, պաստառներով
աշխատանքի արդյունքն այնքան ակներև
է, որ մեկ անգամ կիրառելուց հետո այն
դառնում է ուսուցչի անբաժան ռեսուրսը:

Nona Arevadze-kotorashvili

Program “Teach Georgian as a second Language”

Teacher-consultant

Use of Posters for Georgian as a Second Language Teaching

ABSTRACT

State language teaching for ethnic minorities in Georgia is extremely important for integration and resocialization. According to the above-mentioned state language learning at non Georgian schools is getting more intensive. With variety innovative methods including natural teaching method with posters has its advantages, that means a close collaboration between communicative activities and real environment during the teaching process which makes language acquisition easier. The posters presents a reflection of different kind of lifetime situations, which gives teachers an opportunity to define lexical and grammatical knowledge of each students and therefore to find the gaps and provide students with an additional knowledge. The main advantages of the natural approaches is to use a target language more and reduce usage of mother tongue during the learning process. Teaching with posters should be corresponding to the National Curriculum goals and results. If the plot of the posters is presented with the different perspectives, students will focus on each subject and actions of the story presented on the poster, that encourage them to express own ideas, interests as well as their own assumptions on the subjects. As a result students are able to speak in Georgia more or less fluently, and it promotes to rise awareness and increase motivation of state language learning.